ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2013թ. թիվ 20-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ԹԻՎ 162-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 7, 15 և 17 կետերը, հաշվի առնելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 11.02.2013թ. թիվ 28 և «Ստեփանավանի N1 վարժարան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի գրությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2010թ. հուլիսի 27-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 162-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

«Ստեփանավանի N 1 վարժարան» ՊՈԱԿ» մասում «Գյուլզադյան Լևոն» բառերը փոխարինել «Ավագյան Նազիկ» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. փետրվարի 21
ք.Վանաձոր